

Պատրիարք էր այնտեղ, ինչպէս քիչ մը վար Սարգսի ընդօրինակած Ագաթանգեղոսի մէջ կը յիշուի:

Այստեղ յառաջ կը բերեմ վերոյիշեալ ֆարոգգիրքի յիշատակարանին բնագիրը.

«Փառք երիս անձնաւորութեանն եւ մի աստուածութեան... գրեցաւ ֆարոզ գիրքս ժողովեալ ի բազում օրինակաց, առ ի պատճառս բոլոր տարւոյն, լինելոյ, զի սկիզբն ի Գաղատիա եղեւ բայց ի կատարումն ոչ եհաս, յետոյ դիմեալ մեր ի սուրբ Երուսաղէմ եւ ի ճանապարհին վասն ծովացեալ մեղաց իմոց, ի Զաման մինչեւ ի յերուսաղէմ վշտօք եկա՛մ եւ ի ճանապարհին խրելով անասունն ի ջուրն բազում գրեանք եղծաւ. եւ սա եւս. յետոյ ողորմութեամբն Աստուծոյ, եւ յաստուածակոխ սուրբ քաղաքն Երուսաղէմ: Ես անարժան Սարգիս արեղայս զոր բազում օրինակս ժողովելով այսչափ բերեալ աւարտեցի ի դուռն Սուրբ Փրկչա անապատիս, ընդ հովանեաւ սուրբ բանդին, եւ սուրբ կափարիչ վիմին. զի թվին ՌՃ (= 1651) ի վարդավառին ծնեալ ելէ ի մօրէ, եւ ՌՃԹԸին (= 1669) ի Տրապիզոն քաղաքին ձեռնադրեցա Աւագ սարկաւազ, եւ ՌՃԻԱ (= 1672) համ(բ)արձման օրն ելա ի Թօխաթու եւ եկա ի մայրաքաղաքն Գաղատիա ի ծառայութիւն առաքելաշէն սուրբ Աստուածածնի վանիցն, ի յաշակերտութիւն քաջ ըրբունապետին Մինաս վարդապետին, եւ ՌՃԻԲին (= 1673) մեծ պահոցն անառակի կիրակին, ձեռնադրեցա՛մ ի